

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻԶԳԻՏԱԿԱՐԳԱՅՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՄԻ
ՆԵՐՔՈՒ**

Միջազգային գիտաժողով – 4

ԾՐԱԳԻՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը երաշխավորում է տպագրության**

17-18 մայիսի, 2016 թ.

Երևանի պետական համալսարան

ԵՊՀ հրատարակչություն

2016

ՀՏԴ 81'1:06

ԳՄԴ 81

Ժ 214

Գրախոսներ՝

Շ. Պարոնյան, ր.գ.դ., պրոֆեսոր
Ս. Աբրահամյան, պ.գ.թ., դոցենտ
Գ. Բարսեղյան, ր.գ.թ., դոցենտ

Գլխավոր խմբագիր՝

Ս. Գասպարյան, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Խմբագրական խորհուրդ՝

Ե. Երզնկյան, ր.գ.դ., պրոֆեսոր
Լ. Մաթևոսյան, ր.գ.դ., պրոֆեսոր
Դ. Գյուլգատյան, ր.գ.թ., դոցենտ

Ժ 214 Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո: Միջազգային գիտաժողով - 4 / ԵՊՀ և Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա - Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 96 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի և Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի համատեղ ջանքերով կազմակերպվող չորրորդ միջազգային գիտաժողովի ծրագիրը և գիտական զեկուցումների հիմնադրույթները: Այն ներկայացնում է լեզվաբանության բնագավառի արդիական խնդիրներ միջգիտակարգային զարգացումների դիտանկունից:

ՀՏԴ 81'1:06

ԳՄԴ 81

ISBN 978-5-8084-2081-6

© ԵՊՀ հրատարակչություն,

© Ս. Գասպարյան

Հատկաբանական խոսքի ուսուցման հաղորդակցական սկզբունքները

Անգլերեն ուսումնասիրողները հատկաբանական խոսքի տիրապետման գործընթացում պետք է ուսումնասիրեն ոչ միայն քերականություն և համապատասխան բառապաշար, այլև երկրագիտական և մշակութային բնույթի երևույթներ: Ակնհայտ է, որ հատկաբանությունները մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն լեզվի, այլև մշակույթի տեսանկյունից: Ընդ որում՝ դրանց միջոցով կարելի է հետազոտել լեզվակիրների մշակույթը, ավանդույթները, սովորույթները, պատկերացումները և կարծրատիպերը իրենց տարածամասնակյա և համաժամանակյա կտրվածքներով: Այլ հարց է, թե ինչպես դա անել: Ասվածի համատեքստում լեզուն, մշակույթը և հատկաբանությունները դիտարկվում են հատկաբանական խոսքի տեսանկյունից:

Օտար լեզվի ուսուցման հաղորդակցական ուղղվածությունը ենթադրում է հաղորդակցական բնույթի միավորների օգտագործման վրա հիմնված լեզվի ընկալման և արտաբերման ուսուցում: Ինչպես նշել է Ի. Ի. Ֆորմանովսկայան, 'Հաղորդակցվելը ենթադրում է ազատ արտահայտվելու և կայուն բանաձևերը վերարտադրելու կարողություն, ինչպես նաև լեզվում գոյություն ունեցող շփման օրենքները և գրուցակիցների հաղորդակցական գործունեությունը հասկանալու ունակություն (Н.И.Формановская, 1987, 3):

**Երզնկյան Ելենա
Մովսիսյան Դիանա**

Հասկացումն ուղղահայաց շարժման դիտանկյունից

Սույն հետազոտության մեջ, ելնելով ճանաչողական փոխաբերության դրույթներից, *empathize, fathom, penetrate, bottom, dig,*

reach հասկացում արտահայտող բայերը ուսումնասիրվում են ուղղահայաց շարժման դիտանկյունից: Տվյալ բայերի իմաստային կառուցվածքում ուղղահայաց շարժման իմակի առկայությունը հիմք է տալիս դրանք դասել ցուցայնություն արտահայտող միավորների շարքին: Փոխաբերական շարժում արտահայտող այս բայերի ցուցայնությունը որոշարկվում է՝ հասկացման մակարդակն ուրվագծող նշորդներն ընդունելով որպես ցուցայնության կենտրոն: Դա նշանակում է, որ հասկացման ամբողջ գործընթացը հարաբերվում է տարբեր նշորդների հետ. գործողության ելակետից մինչև վերջնակետն ընկած ուղու երկարությունը, հասկացման խորությունն արտահայտող մակբայներն ու մակբայական արտահայտությունները, մտավոր շարժման ուղղվածությունը մատնանշող նախդիրները, հաստատական և ժխտական նախադասություններում գործածության հակվածությունը: Բայերին բնորոշ հասկացման մակարդակը սահմանվում է գործողության ավարտին ցուցայնության սուբյեկտի և ցուցայնության նպատակի միջև ընկած հեռավորությամբ: Դրանց համընկնման դեպքում զրանցվում է հասկացման բարձր մակարդակ: Հասկացման մակարդակի նվազագույնից առավելագույնը դրսևորվածությունը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ *fathom, bottom, penetrate, reach, dig, empathize*:

Երնջակյան Նվարդ

Պատմամշակութային ակնարկ Երևան քաղաքի 60-ականների մասին

Քաղաքային կենցաղի ուսումնասիրությունն իր հաստատուն տեղն է զբաղեցրել մարդաբանական դիտարկումների համատեքստում: Կարևորելով մասնավորապես հիշողության ու մոռացության վերաբերյալ տեսական արծարծումները՝ կարելի է ասել, որ դրանց հիմնադրույթները էական են մարդկանց դերակատարության արժևորման առումով: Քաղաքի տարա-